ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԲԱՆ

ՊԵՏՐՈՍ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Սանկտ–Պետերբուրգի եւ Պրիւսէլի համալսարանների պրոֆեսոր Նիկողայոս Ադոնցը (1871–1942) *թերեւս 20րդ դարի ամենաականաւոր հայ պատմաբանն է։ Նա նաեւ բանասէր էր, հնագէտ, ձեռագրագէտ, խմբագիր, հասարակական–քաղաքական գործիչ։ Առաւել նեղ իմաստով՝ նա բիւզանդագէտ էր, 20րդ դարի համաշխարհային բիւզանդագիտութեան ամենանշանաւոր դէմքերից մէկը։ Ն. Ադոնցի մենագրութիւնները՝* Հայաստանը Յուստինիանոսի Դարաշրջանում, Դիոնիսիոս Թրակացին եւ Նրա Հայ Մեկնիչները, Հայկական Հարցի Լուծման Շուրջ, Մաշտոցը եւ Նրա Աշակերտները, Հին Հայոց Աշխարհայեացքը, Հին Հայոց Շինականութիւնը, Քաղաքական Հոսանքները Հին Հայաստանում, Բագրատունեաց Փառքը, Արտաւան Արշակունի, Մամիկոնեան Իշխանուհին Բիւզանդական Գահի Վրայ, Վարդ Մամիկոնեան, Հայերը Բիւզանդական Գիտութեան Մէջ, Վասիլ Հայկազն, Աշոտ Բ. Երկաթ, Սամուէլ Հայը Բուլղարների Թագաւոր, Հայաստանի Պատմութեան Ակունքները, *եւայլն՝ պատմագիտական իսկական գլուխգործոցներ են, հայագիտութիւնը հարստացնող մնայուն արժէքներ։*

Չնայած Ն. Ադոնցի ու նրա գիտական ժառանգութեան հանրաճանաչութեանը՝ ցայսօր նրա վաստակի ոչ բոլոր կողմերն են, որ բաւարար խորութեամբ յայտնի են։ Միայն վերջերս ընթերցող ու գիտական հասարակայնութիւնը կարողացաւ ծանօթանալ ականաւոր հայագէտի ստեղծագործական հարուստ ժառանգութեան կողմերից մէկին՝ Հայկական Հարցին նուիրուած նրա աշխատութիւններին[1]։ Գիտական ու ընթերցող լայն շրջանակները, ըստ էութեան, քիչ գիտեն նաեւ նրա Հայոց Եկեղեցու պատմութեանը նուիրուած աշխատութիւնների մասին։ Հանրայայտ է, որ Ն. Ադոնցը համարեա իր բոլոր աշխատութիւններում, ի շարս այլեւայլ

հարցերի, անդրադարձել է նաեւ Հայոց Եկեղեցու պատմութեանը վերաբերող բազմաթիւ խնդիրների։ Եւ դա խիստ բնական էր ու հասկանալի, քանզի եկեղեցու եւ ժողովրդի պատմութիւնը անխզելիօրէն շաղկապուած էին միմեանց, եւ մէկը հանդէս էր գալիս միւսի հետ որպէս մի ամբողջական համակարգ։ Սակայն Ն. Ադոնցի գիտական ժառանգութեան մէջ քիչ չեն նաեւ այն էջերը, որոնք նուիրուած են զուտ եկեղեցուն ու նրա պատմութեանը, հայոց կեանքում նրա դերին ու նշանակութեանը, եկեղեցական մատենագիտութեանն ու արուեստին։

Յատկանշական է, որ Ն. Ադոնցի հայագիտական առաջին պրպտումները վերաբերում էին Հայոց Եկեղեցու պատմութեանը։ Ուսուցչապետ Նիկողայոս Մառի խորհրդով նա դեռեւս Ս. Պետերբուրգի համալսարանի Արեւելեան Բաժանմունքում սովորելու տարիներին սկսում է ուսումնասիրել հայոց Յայսմաւուրքները, Ճառընտիրներն ու Ճաշոցները։ Այդ նիւթերին ծանօթանալու եւ նիւթեր հաւաքելու նպատակով նա իր բոլոր արձակուրդները անցկացնում է Վաղարշապատում, Վիեննայում եւ Վենետիկում։ Ուսումնասիրելով ու քննութեան առնելով բազմաթիւ ձեռագրեր՝ Ն. Ադոնցը վերլուծութեան է ենթարկում հայոց եկեղեցական տօնների համակարգը, տալիս Յայսմաւուրք ժողովածուների ծագման ու զարգացման ուղիները, տարորոշում նրանց խմբագրութիւնները։ Ի վերջոյ, 1899 թուականին նա պաշտպանութեան է ներկայացնում իր աւարտաճառը, որն արժանանում է ոսկէ մետալի եւ բաժանմունքի գիտական խորհրդի առաջարկութեամբ որոշւում է այն տպագրել համալսարանի հաշուին։ Սակայն ինչ–ինչ պատճառներով Ն. Ադոնցի աւարտաճառը այդպէս էլ չտպագրուեց։ Միայն շատ տարիներ անց, արդէն փարիզեան տարագրութիւնում, նա այն վերամշակում եւ մասամբ հրապարակում է Ֆրանսերէն[2]։ Այդ թարգմանութեան մաքրագիր–մեքենագիր մի տարբերակ (180 էջ) գտնւում է պատմաբանի պէյրութեան թղթօնում[3] եւ կարող է գաղափար տալ կատարուած տքնաջան ու լայնածաւալ աշխատանքի մասին[4]։

Որ սոյն նիւթը Ն. Ադոնցի համար պատահական հրապուրանք չի եղել եւ նա լրջօրէն ու անընդհատ զբաղուել է թեմայի յետագայ ուսումնասիրութեամբ ու մշակմամբ՝ ակներեւ է նոյն թղթօնում ձեռագիր վիճակում պահպանուող բազմաթիւ աւարտուն ու կիսաւարտ գործերից («Տօնացոյց», հայերէն, 600 էջ, մէկ այլ տարբերակ՝ 500 էջ։ «Գրիգոր Անաւարզեցու տօնացոյցը», ռուսերէն, 50 էջ։ «Ճաշոց»ին վերաբերող շուրջ 150 էջ նիւթեր, եւ այլն)։ Հայոց Եկեղեցու պատմութեան առանձին մանրամասներ են շօշափւում նաեւ պատմաբանի «Հայոց Առաքելութիւնը Հոնաց Աշխարհում»[5], «Հայ–ծաթերի ծագման մասին»[6], «Քերսոնի եպիսկոպոս Ամպեւիոսը»[7], ինչպէս նաեւ՝ Գրիգոր Լուսաւորիչին նուիրուած[8] եւ բազմաթիւ այլ ուսումնասիրութիւններում։ Ն. Ադոնցի նմանաբնոյթ երկասիրութիւն-

ներից կը ցանկանայինք առանձնացնել յատկապէս երկուսը՝ «Հայոց Եկեղեցու հազարվեցհարիւրամեակի նախօրէին»[9] եւ «Հայացած Աստուածաշունչն ու անոր պատմական տարողութիւնը»[10] յօդուածները։ Սրանցում ականաւոր պատմաբանը ոչ միայն ցուցահանում է եկեղեցու տեղն ու անառարկելի դրական նշանակութիւնը հայոց պատմութեան մէջ՝ այլեւ վերլուծում հայացած Աստուածաշնչի գրական–գեղարուեստական առանձնայատկութիւններն ու արժանիքները։

Ստեղծագործական կեանքի վերջին շրջանում, երբ Ադոնցը ամբողջութեամբ ամփոփուած էր բիւզանդագիտական հետազօտութիւններով՝ նա հանդէս է գալիս նաեւ եկեղեցական արուեստին նուիրուած փոքրիկ, սակայն շատ հմտալից դիտողութիւններով[11]։ Պատմաբանի անձնական թողոնի բազմաբնոյթ ու ցաքուցրիւ նիւթերի մէջ հանդիպում ենք նաեւ եկեղեցու պատմութեանը նուիրուած՝ այլ չհրապարակուած ձեռագիր ու երբեմն նաեւ անմշակ եւ անաւարտ էջերի, ինչպէս օրինակ՝ «Պատկերների խնդիրը Հայոց Եկեղեցու մէջ» (հայերէն, անաւարտ, 65 էջ), «Ասորա–պարսկական Քրիստոնէական Եկեղեցու աստիճանակարգութիւնը» (ռուսերէն, անաւարտ, 20 էջ), «Քրիստոնեաների հալածանքները Սասանեան Պարսկաստանում 5–6րդ դարերում» (ռուսերէն, նիւթեր, 30 էջ), «Մի էջ կաթողիկոսութեան մերձաւոր անցեալից» (հայերէն, աւարտուն, 17 էջ) եւ այլն։

Ինչպէս արդէն չեշտեցինք՝ վերոբերուածներից առաւել մշակուած ու վերջնական–մաքրագիր տարբերակի տեսք ունի յատկապէս վերջին յօդուածը։ Նկատի ունենալով Հայոց Եկեղեցու պատմութեան համար այստեղ բարձրացուած հարցերի յուժ կարեւորութիւնն ու առանձնայատկութիւնը՝ հենց այս նիւթը նախընտրեցինք ներկայացնել Հայկազեան Հայագիտական Հանդէսի ընթերցողների ուշադրութեանը։ Համոզուած ենք, որ յօդուածի հրապարակումը կարող է մեծապէս օգտակար լինել Ն. Ադոնցի գիտական գործունէութիւնը ուսումնասիրողների համար, մանաւանդ, որ դեռեւս հրապարակի վրայ չունենք նրա կեանքն ու գործունէութիւնը ամբողջութեամբ ամփոփող ուսումնասիրութիւններ[12]։ Այն փաստը, որ հայագէտի պէյրութեան թողոնը գերազանցապէս բաղկացած է նրա փարիզեան եւ պրիւսէլեան գործունէութեան ժամանակաշրջանների նիւթերից, ինչպէս նաեւ ելնելով յօդուածում առկայ որոշ ակնարկներից՝ եկել ենք այն եզրակացութեան, որ սոյն գործը գրուել է մօտաւորապէս 30ական թուականների վերջերին՝ պրիւսէլում եւ նախատեսուած է եղել հրատարակել Փարիզում լոյս տեսնող եւ Ս. Վրացեանի խմբագրած Վէմ հանդէսում։ Սակայն ինչ–ինչ հանգամանքներ խանգարել են յօդուածի հրապարակմանը եւ այն այսքան տարիներ անյայտ ու անհաղորդ է մնացել ընթերցող շրջանակներին։

Յօդուածը նուիրուած է 1884 եւ 1885 թուականների կաթողիկոսական զոյգ ընտրութիւնների կնճռոտ խնդրին եւ այդ ընտրութիւններին Հայոց Եկեղեցու նշանաւոր դէմքերից մէկի՝ Զմիւռնիայի հոգեւոր թեմի առաջնորդ Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս Մուրադեանի (1836–1903) մասնակցութեան հարցին։ Անհրաժեշտ է նշել, որ յօդուածի սկզբում ակնարկուող թղթակցութիւնները տեղի են ունեցել Մելքիսեդեկ Արքեպիսկոպոսի եւ Սինոդի անդամ Ս. Կաթողիկէի փակակալ եւ կաթողիկոսական տեղապահ Երեմիա Եպիսկոպոս Գալուստեանի (1840–1897) միջեւ՝ 1891 թուականի կաթողիկոսական ընտրութիւնների նախօրեակին։

Յօդուածը հրապարակելիս՝ բնականաբար հարց էր ծագում, թէ արդեօք այն արդէն հնացած չէ՞, եւ ի՞նչ է տալիս այն մերօրեայ իրականութեանն ու գիտութեանը։ Անկասկած, Ն. Ադոնցի նկատմամբ այսպիսի մօտեցումը մերժելի է, եւ ինչպէս ճիշդ նկատում է Պրոֆ. Գ.Խ. Սարգսեանը՝ «Նրա իւրաքանչիւր աշխատութիւն պէտք է դիտել որպէս գիտական այնպիսի ժառանգութիւն, որը հետաքրքրական, կարեւոր եւ ուսանելի է մեզ համար հենց իր բնական ձեւով, իր բոլոր կողմերով»[13]։

Հրապարակուող յօդուածի ինքնագիրը, ինչպէս արդէն նշեցինք, պահւում է Համազգայինի Պէյրութի գրական պահոցի Նիկողայոս Ադոնցի անձնական թղթոնում (պահարան I, գզրոց Բ, թղթածրար 1)։ Բնագիրը հրատարակւում է նոյնութեամբ, որոշ անհրաժեշտ կէտադրական միջամտութիւններով։

Պ.Յ.Յ.

ՍԻ ԷՋ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՆՑԵԱԼԻՑ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

Մելքիսեդեկ եւ Երեմիա եպիսկոպոսների թղթակցութիւնը կարող է մտքեր պղտորել, առանց հարկաւոր լուսաբանութեան։

Ո՞վ են այս եպիսկոպոսները, ի՞նչ պայմաններում է տեղի ունեցել նրանց թղթակցութիւնը եւ ի՞նչ է վերջինիս հասարակական արժէքը եւ որքա՞ն հիմնաւոր է Մակար կաթողիկոսի[14] հասցէին ուղղուած ամբաստանութիւնը։

Մելքիսեդեկ Զմիւռնիոյ առաջնորդ էր, երբ 1885 թ. կաթողիկոսական առաջին թեկնածու ընտրուեց։ Երկրորդ թեկնածուն էր Քիշնեւի եւ Պեսա-

բապիայի առաջնորդ Մակար Արքեպիսկոպոսը՝ կաթողիկոսութեան տեղապահը։ Ռուսաց կայսրը՝ Աղեքսանդր Գ. հաստատեց Մակար Արքեպիսկոպոսի թեկնածութիւնը՝ հակառակ ընդունուած սովորութեան, որով միշտ հաւանութիւն էր տրւում առաջին ընտրեալին։ Մերժուած Մելքիսեդեկ Եպիսկոպոսը դառնացաւ, վրիպած տեսնելով մեծ պատուի առիթը։ Դառնութիւնը հասկանալի էր եւ մարդկօրէն ներելի։ Լուսաւորչի գահին արժանանալ՝ եզակի փառք է եւ տենչանքի վերջակէտ ամէն մի եկեղեցականի համար։ Մելքիսեդեկ, անպայման, մեծապէս պիտի գնահատուէր եւ իր անուան աւելի մեծ շուք բերած կը լինէր, եթէ պարկեշտութիւնն ունենար մնալու վեհ լռութեան մէջ, թողնելով իր համակիրներին ասել կամ անել ինչ որ հնար էր այս առթիւ։ Տարաբախտաբար, նա այս փափկանկատութիւնը չունեցաւ եւ ազատօրէն հրապարակ նետուեց՝ անձամբ պաշտպանելու կորցրած դատը։ Ներողամիտ մարդիկ, գիտակ մարդկային թերութիւններին, կարող էին պահանջկոտ չլինել նաեւ այս տկարութեան հանդէպ, եթէ վշտացած եպիսկոպոսը պահէր գործը նեղ սահմաններում, բաւականանալով հերքել կայսերական անվստահութիւնն իր անձին վերայ։ Սակայն Մելքիսեդեկ աւելի առաջեց անխոհեմութեան ուղիի վրայ եւ ջանք չխնայեց համոզելու հայ աշխարհը, որ իր ձախողանքը մի ահաւոր աղէտ էր Հայ Եկեղեցու եւ ազգի համար, մի անդարմանելի չարիք, որի բուն աղբիւրն է որպէս թէ Պոլոժենիա[15] կոչուած եկեղեցական կանոնագիրը[16]. ուստի եւ ամէն ճիգ թափեց վարկաբեկ անելու Հայ Եկեղեցու կանոնագիրը, այլեւ սեւացնելու նորընտիր հայրապետին, առանց պատկառելու, որ իբր եկեղեցական պարտաւոր էր յարգանք տածել դէպի իր մեծաւորը, եկեղեցու պետը։

Մակարի հայրապետութեան երրորդ տարին էր, 1888 թուին, երբ Պոլսում [նա] հրատարակեց Երկու Խօսք Ռուսաստանի Հայոց Կրօնական եւ Կրթական Վիճակին Վրայ գրութիւնը, ուր մոլար հայեացքներ, թիւր դատողութիւններ եւ բուռն կիրք արձակ դաշտ են գտել։

Արդ Երեմիա Արքեպիսկոպոսին գրած թուղթն այլ բան չէ, քան ամփոփումը յիշեալ գրութեան։ Մակար գահ բարձրացաւ առանց լայն համակրանքի, առանց ժողովրդական ծափերի, բայց վարեց իր սրբազան պաշտօնը, ինչպէս կը տեսնենք, ամենայն արժանապատուութեամբ եւ թողեց բարի անուն եւ յիշատակ։ Սակայն Մելքիսեդեկ եւ մի քանի ուրիշներ մնացին յառած իրենց համոզման։ Հանգուցեալ հայրապետի[17] շիրիմը տակաւին թարմ էր, երբ Մելքիսեդեկ հարկ տեսաւ գրել էջմիածին եւ կրկնել հին երգը։ Թւում է, թէ կաթողիկոսանալու փափաքը դեռ սառած չէր։ Նրբօրէն յիշեցնում է մօտիկ անցեալը, իր ընտրութեան եւ մերժումի պարագան, եւ չի խորշում անուանարկելու մի անգամ եւս իր մեռած մրցորդին, որակելով նրան՝ «ռուս տէրութեան արարած», որ «ստրկօրէն ընդունեց օտա-

բաղաւան վեհապետից կաթողիկոսութիւնը որպէս մի ռուս մետրոպոլիտութիւն։ Մելքիսեդեկ սրբազանը կարծում է, որ «ռուս կառավարութիւնը Պոլոժենիայի օրէն մտադրած է յափշտակել կաթողիկոսական ընտրութեան իրաւունքը», որ «հայրապետական աթոռի գոյութիւնն անգամ վտանգի է ենթարկուած» եւ այս՝ չնորհիւ ոչ միայն «օտարի բռնաբարութեան»՝ այլ նաեւ «եկեղեցականաց անսիրելութեան եւ փառամոլութեան»։ Վերջինս ուղղուած է «Մակար սրբազանի օտարոտի գահակալութեան»։ Ողբալով էջմիածնի կացութիւնը՝ Մելքիսեդեկ յորդորում է զգաստանալ եւ դիմադրել ռուսական բռնութեան, որովհետեւ «Հայոց Եկեղեցւոյ կեանքը դիմադրութեան մէջ է, հզօր դիմադրութեան»։ Հետեւապէս դիմադրող, կռուի մարդ է հարկաւոր Մայր աթոռի վրայ։ Արիստակէս Եպիսկոպոսն[18] անուանարկւում է որպէս «հետամուտս կաթողիկոսութեան»։ Ասել է, թէ Մելքիսեդեկ չի հաւատում Արիստակէսին վերագրած ձգտումին։ Ցարութիւն Պատրիարքը[19] «վաճառել է ազգի ընտրական իրաւունքը», Աշըգեան[20] «արդէն իսկ պատրաստական ծառայ է ռուս քաղաքականութեան», Խրիմեանն՝ «զառամեալ, աւելի հանգստեան կը կարօտի, քան պաշտօնի»[21]։ Ուրեմն էլ ո՞վ մնաց հրապարակի վրայ, արժանի կաթողիկոսութեան։ Եզրակացութիւնը դժուար չէ։

Մելքիսեդեկի այս ընդդիմադրական քարոզը եթէ անկեղծ է եւ իր համոզումն է՝ ամէն պարագայի մեծ իմաստութիւն չէ վարչական մարդու համար։ Ինք որ իր երիտասարդութեան տոգորուած լինելով այն գաղափարներով, որոնց զոհ գնացին Նալբանդեան[22] եւ ուրիշներ, չկարողացաւ պաշտպանել իր անձը եւ ստիպուած եղաւ թողնել Ռուսիան[23], այժմ կարծում է, որ հայրապետական գահին թիկնած դիւրին կը լինի դիմադրութեամբ ապահովել եկեղեցու իրաւունքները։ Հարկաւ, դիմադրութիւնը պէտք է, երբ հարկը պահանջում է։ Մեզ այնպէս է թւում, սակայն, որ եկեղեցին վարելու եւ իր շահերը պաշտպանելու մեծագոյն արուեստը այն բարձր կարողութիւնն է, այն խոհական աչալրջութիւնը, որ բռնութեան եւ դիմադրութեանն տեղիք չի տալիս՝ պահելով եկեղեցին իր իրաւունքի եւ պարտականութեան սահմանների մէջ, համաձայն ընդունուած օրինագրի կամ կանոնագրի։ Ռուս կառավարութեան վերջին միջամտութիւնը եկեղեցական գործերի մէջ[24] բնական հետեւանք էր մեր եկեղեցականութեան վարչական ապիկարութեան։ Տրտունջն ու բողոքը աժան երեւոյթներ են եւ դարձան մեզանում մի զարդարուն լաթ սքօղելու [համար] մեր սեփական անկարողութիւնը եւ նետելու ուրիշների վրայ պատասխանատուութեան ծանրութիւնը։ Այս կարգի են Պոլոժենիայի դէմ ուղղուած գանգատները։ Պէտք է խոստովանել, որ Պոլոժենիան մի մեծ բարիք էր Հայ Եկեղեցու համար, մի կանոնագիր, որ հանում էր եկեղեցին իր դարաւոր չփոթ եւ խառնակ վիճակից։ Կարիք չկայ խորանալու պատմութեան մէջ։

Ցիշենք միայն անմահ Պատմահօր խօսքերը Վաղարշակ թագաւորի[25] բերանից «ո՛չ կարգք ինչ աստ լեալ յայտնի, եւ ոչ մեհենից պաշտամունք- եւ ո՛չ գլխաւորաց աշխարհիս առաջինն յայտնի է, եւ ոչ վերջինն, եւ ո՛չ այլ ինչ օրինաւոր, այլ խառն ի խուռն ամենայն եւ վայրենի»[26]։ Այս «վայրենի» մթնոլորտում էր թաւալում եւ հայ եկեղեցական կեանքը։ Բիւզանդական Կայսրութիւնը, որի ժամանակ կրօնն աւելի մեծ հրապոյրներ ունէր, երբեք չյօժարեց հովանաւորել Հայ Եկեղեցին, զլացաւ ճանաչել պետական մարմին, թողեց եկեղեցին իր բախտին, եւ պատրաստ միշտ քայքայելու՝ յունական եպիսկոպոսութիւններ հաստատեց Հայաստանում։ Սելճուկեան արշաւանքը վերջ տուաւ այս աւերիչ քաղաքականութեան, յոյն նուիրապետութիւնը վերացաւ մեր երկրից։ Մուսուլման տիրապետութեան ներքոյ Հայ Եկեղեցին շատ գարուններ տեսաւ, շատ ձմեռներ, ե՛ւ առանձնաշնորհումներ ունեցաւ ե՛ւ զրկանքներ կրեց։ Երբեք չկարողացաւ այս թէ այն պատճառով հաստատուն իրաւակարգ մշակել, թողնելով ամէն ինչ տեղի եւ ժամանակի պայմաններին եւ կաթողիկոսների անհատական հնարաւորութիւններին եւ օտար վեհապետերի տրամադրութիւններին։

Ռուսական Կայսրութիւնն էր, որ Արարատեան Դաշտը Մայր Աթոռով գրաւելուց յետոյ, հետամուտ եղաւ դարմանել վիրաւոր Հայ Եկեղեցին, կանոնաւորելով նրա ներքին կեանքը իր պատմական հիմքերի վրայ։ Տարիներ շարունակ աշխատեց մօտէն ծանօթանալ նրա անցեալին, աւանդութիւններին եւ սովորոյթներին եւ բարք ու վարքին. դիմեց մասնագէտ հայերի եւ նրանց յանձնեց կազմել Հայ Եկեղեցու համար հիմնական մի կանոնագիր։ Շահան Ջրպետ (Եդեսացի հայ եւ Փարիզի Արեւելեան Լեզուների Դպրոցի պրոֆեսոր, հրաւիրուած ուսուցիչ Ներսիսեան դպրոցի)[27] եւ Սերովբէ Եպիսկոպոս[28] պատրաստեցին մի նախագիծ։ Ռուս կառավարութիւնը չչտապեց, նախագիծը նորանոր քննութեան ենթարկեց, լրջօրէն ուսումնասիրեց բոլոր կէտերը[29], կարեւոր սրբագրութիւններ արաւ գրեթէ միշտ ի նպաստ Հայ Եկեղեցու, եւ խմբագրութեանն աւելի կատարեալ ձեւ տալով՝ հաստատեց եւ հրատարակեց կայսերական հրովարտակով 1836 թուի Մարտի 11ին։

Հայ բազմաչարչար եկեղեցին ելաւ վերջապէս ամէն տեսակ կամայականութիւնների շրջանակից եւ կանգնեց օրինական թմբի վերայ։ Կարգ եւ կանոնն առաջին պայմանն է որեւէ հաստատութեան, թէ հասարակութեան առաջադիմութեան։

Նոր Կանոնագիրն ոչնչով չէր մեղանչում Հայ Եկեղեցու աւանդութեան կամ շահերի դէմ, այլ լրացնում էր կարեւոր պակասները։ Գուցէ կատարեալ գործ չէր, բայց անկատարն աւելի լաւ էր, քան ոչինչը եւ ո՞վ էր, որ պիտի մշակէր կատարեալը։

Արդ եկեղեցուն վիճակուած այս բարեկարգութիւնն անգամ տրտուն-

ջի եւ բողոքի նիւթ եղաւ։ Առաջինն եղաւ Կ. Պոլսոյ պատրիարքը[30], որ դըժգոհութիւն յայտնեց յախուռն կերպով, որ Նորահաստատ Սինոդը[31] սահմանափակում է Հայոց Հայրապետի միահեծան իշխանութիւնը։ Բարեմիտ պատրիարքը մոռացել էր, որ իր իսկ պատրիարքարանի գոյութիւնն ամենամեծ սահմանափակումն էր հայրապետական միահեծանութեան, նրա իրաւասութիւնից հանելով հայութեան խոշորագոյն մասը։ Բողոքը բացատրելու է թերեւս այն անվստահութեամբ, որ տիրում էր Պոլիս՝ հայ շրջաններում, հանդէպ Ռուսիոյ։ Սակայն Սինոդ հաստատելու գաղափարը ծնել էր սկզբնապէս հայ գլուխներում եւ ոչ ռուս։ Մինաս Լազարեանն[32] էր Էջմիածնի հաւատարմատարը՝ Պետերբուրգ, եւ իմաստուն խորհրդակիցը կաթողիկոսների, որ առաջին անգամ Սինոդի խնդիր յարուցեց։ Դաւիթ–Դանիէլեան աղմուկները[33] ծանր տպաւորութիւն էր թողել օտարների վերայ, հինաւուրց եկեղեցու վարկը արատաւորելու չափ։ Արտացաւ Լազարեանը առաջարկեց մի սինոդասարան հաստատել բարձրաստիճան եկեղեցականներից, մի հեղինակաւոր մարմին, որ օժանդակ լինէր կաթողիկոսին եւ հսկէր հայրապետական կանոնաւոր յաջորդութեան վրայ, թոյլ չտալով տխուր երեւոյթների կրկնութիւնը։ Դանիէլ Կաթողիկոսը, յետոյ Եփրեմ Կաթողիկոսը[34], դիմեցին ռուս կառավարութեան նոյն բաղձանքով։ Առաջին դիմումը ստորագրած է ի միջի այլոց, Ներսէս Վարդապետ, ապագայ Ներսէս Ե. Կաթողիկոսը[35]։ Ռուսները ընթացք չտուին խնդրին, այն սոսկ պատճառով, որ Մայր Աթոռը տակաւին ռուսական սահմաններից դուրս էր եւ անխոհեմութիւն կը լինէր միջամտել օտար պետութեան մէջ նստող կաթողիկոսարանի գործերին։ Իսկ երբ գրաւեցին Երեւանը՝ ձեռնամուխ եղան կարգի բերելու Հայ Եկեղեցու վիճակը, որի հետեւանքը եղաւ, երկարամեայ աշխատութիւններից յետոյ, 1836 թուի Պոլոժենիան։

Մատթէոս Ա. Կաթողիկոսը[36], ինչպէս եւ Պոլսի պատրիարքը[37], հաշտ աչքով չնայեցին նոր կանոնագրութեան վերայ. վերաքննութեան ծրագիրներ պատրաստեցին, որոնց մասին կարելի է գաղափար կազմել Մատթէոս Եպիս. Իզմիրլեանի[38] ստորագրութեամբ հրատարակուած զեկուցումից. Տեղեկագիր Կաթողիկոսական Երկրորդ Յանձնաժողովոյ առ Ազգային Ընդհանուր Ժողովն, Կ. Պոլիս, 1883։

Պոլիս չարունակեց միշտ խեթ նայել Պոլոժենիային, չափազանցելով նրա թերիքը եւ գրեթէ ուրանալով անվիճելի արժանիքը։ Մելքիսեդեկ Եպիսկոպոսը ծայրայեղ դժգոհներից էր։ Այնքան հեռու է գնում իր սրբտմտութեան մէջ, որ կայսեր վերապահուած իրաւունքը՝ երկու թեկնածուից մէկը հաստատել, համարում է յափշտակութիւն ընտրական իրաւունքի. ինչո՞ւ։ Երկրորդ թեկնածուն փողոցից չէ առնուած։ Նա եւս ընտրուած է ազգովին։ Պէտք է խոստովանել, որ Ազգային Ընտրական Ժողովը շատ հետեւողական է եղել իր ընտրութեան մէջ։ Ընտրութեան ժամանակ՝ ինքը

Ներսէս Ե. յանձնարարեց ի միջի այլոց Մատթէոս Եպիսկոպոսին եւ արդարեւ իրենից յետոյ նա կոչուեց Էջմիածին։ Մատթէոսի երկրորդն էր Գէորգ Եպիսկոպոսը[39], եւ յաջորդ ընտրութեան նա գահ բարձրացաւ։ Խրիմեանի հետ թեկնածու էր Մատթէոս Իզմիրլեանը, որ եւ նրան յաջորդեց։ Մնաց Մելքիսեդեկի դէպքը։ Ներսէս Վարժապետեանի[40] հետ երկրորդ թեկնածու էր ընտրուել Խրիմեանը եւ ուրեմն, նա պէտք է լինէր Ներսէսի յաջորդը։ Սակայն շատերն ընդդիմացան նրան, մեծ համարում չունենալով նրա վարչական ձիրքերի մասին, եւ առաջ մղեցին Մակարի թեկնածութիւնը։ Այսպիսով մրցութիւնը Խրիմեանի եւ Մակարի միջեւ էր։ Մելքիսեդեկ բնաւ մեծաքանակ համակիրներ չունէր, եւ նրա յաջողութիւնը պարզ հետեւանք էր, ձայն են տալիս երկուստեք մի երրորդ անձի։ Մակար աւելի քուէ ստացաւ քան Խրիմեանը, բայց մրցոյթից օգտուեց Մելքիսեդեկը՝ համաձայն դասական առածի՝ «երկուսը կռուելիս, շահում է երրորդը»[41]։

Մելքիսեդեկի յաղթութիւնը ձեւական էր եւ, հետեւապէս, պէտք չէր այնքան աղմկել։ Մակարի հաստատումը, սկզբունքի տեսակէտէն եւս, չէր բռնաբարում Հայ Եկեղեցու «գերիշխանութեան» իրաւունքը։ Լինենք իրաւախոհ։ Օրէնքի պահանջը՝ ներկայացնել երկու ընտրեալ, նշանակում է, որ կայսրն իրեն է վերապահում երկուսից մէկն ընտրելու վերջին իրաւունքը։ Հակառակ դէպքում, այսինքն՝ եթէ հաստատողը պարտաւոր է վաւերացնել առաջին կոչուած թեկնածուն, այն ժամանակ ի՞նչ իմաստ ունին երկուսի ընտրութիւնն ու ներկայացումը։ Միւս կողմից, հարկաւ, անպատեհութիւն է տեսնել հաստատուած երկրորդ եւ ոչ առաջին թեկնածուն։ Միակ պատուաւոր ելքը մնում է այն, որ ընտրական ժողովը կանգ առնի երկու հաւասարարժէք անունների վրայ՝ առանց «առաջին» եւ «երկրորդ» որակումի։ Սրանով ազգային ձայնը եւ կայսրի հաճութիւնը կը խուսափէին ընդհարումից։ Իսկ եթէ դժգոհ բծախնդիրը յամառէր եւ խնդիր ծագէր օրինագրի կէտը փոխելու, ո՞վ կարող էր երաշխաւորել, որ կաթողիկոսի հաստատութիւնը չէր վերապահուի այս անգամ Երեւանի նահանգապետին, նման նախկին խաներին, կամ Կովկասի կառավարչապետին, ինչ որ կը լինէր խոշոր հարուած Մայր Աթոռի արժանապատուութեան։ Տակաւին ռուսաց տիրապետութեան տակ չանցած, մեր կաթողիկոսները ձգտում էին հաստատուել Ռուսիոյ կայսեր կողմից՝ իրենց դիրքը բարձրացնելու համար։ Պոլոժենիան իրականացրեց նրանց բաղձանքը։ Ռուս շահերին ընդդէմ չէր հովանաւորել Հայ Եկեղեցին։ Կովկասի փոխարքաները՝ իշխան Վորոնցով[42] եւ իր յաջորդը իշխան Բարիատինսկի[43] շատ բարեացակամ էին։ Ներսէս Աշտարակեցու մահից յետոյ, նոր կաթողիկոսի ընտրութեան առթիւ, իշխան Բարիատինսկի հարցնում էր Պետերբուրգի արքունիքին, թէ ի՞նչ դիրք պէտք էր բռնել հայերի վերաբերմամբ եւ ի՞նչ

քաղաքականութեան հետեւել։ Արդեօ՞ք պէտք էր ստեղծել հայերից մի զօրաւոր եւ հաւաք ազգութիւն՝ առաջացող ուրոյնութեան շաւղով եւ ընդունակ՝ քաղաքական կարեւոր կշիռ ունենալու արեւելեան խնդիրներում, թէ ընդհակառակը, գերադասելի էր կասեցնել նրանց բարոյական զարգացումը՝ մշտապէս կայսերական հսկողութեան եւ թաթի տակ պահելու ցանկութեամբ։ Մի դէպքում, նոյն իշխանի կարծիքով, կարեւոր էր, որ կաթողիկոսը լինէր մի ազնիւ, լուսամիտ, հաստատ նկարագիր ունեցող մի դէմք, միւս դէպքում՝ բաւ էր տեսնել հայրապետական գահի վրայ անարժան ումն՝ բարոյապէս վարկից զուրկ եւ պատրաստ ծառայելու գործիք ռուսաց քաղաքականութեան։

Մատթէոսի ընտրութիւնը եւ այն արտակարգ շքեղ ընդունելութիւնը, որին չէր արժանացել ոչ մի նորընտիր՝ առաջ եւ յետոյ, վկայում էին անխաբօրէն, որ առաջին տեսակէտն է, որ յաղթանակել է։ Իշխան Բարիատինսկին յայտնել էր արդէն իր հայեացքը նախապէս առաջին մինիստրին[44] ուղղուած նամակում, թէ պէտք է հովանի լինել Հայ Եկեղեցուն եւ ազգութեան, որպէսզի կարելի լինի գրաւել թուրքահայերի համակրանքը՝ ընդդէմ եւրոպական պետութիւնների ազդեցութեան։ Տարաբախտաբար Մատթէոս Ա. օրուան մարդը չեղաւ եւ չկարողացաւ շահաւետել նպաստաւոր տրամադրութիւնները եւ արժեցնել հայրապետական գահի նշանակութիւնը։ Մնաց մի միջնադարեան վանական, որ աւելի կրօնական գրքեր գրելով[45] զբաղուեց՝ քան վարչական գործերով։ Անհմտութիւնը, թէ Պոլսէն բերած նախապաշարմունքը Պոլոժենիայի նկատմամբ թոյլ չտուին նրան փոխանակ քննադատելու՝ օգտուել լայնօրէն այն բոլոր հնարաւորութիւններից, որ տալիս էր Պոլոժենիան եւ ամուր հիմքերի վրայ դնում գէթ դպրոցական գործը։

Երեւանի նահանգը գրաւելուց յետոյ՝ Պասկեւիչն անգամ անհրաժեշտ էր համարում էջմիածնում բանալ մի հոգեւոր բարձր դպրոց Հայ Եկեղեցու համար նոր եւ լուսաւորեալ անձեր պատրաստելու համար։ Իշխան Բարիատինսկին յիշեալ գրութեան մէջ յիշում է, որ Գաբրիէլ Վարդ-Այվազեանը[46] դպրոց է հիմնել Օդեսայում[47] եւ այն միտքն է յայտնում, որ թէեւ ռուս կառավարութիւնը միշտ թերահաւատութեամբ է վերաբերուել դրսէն եկած ուսուցիչների եւ դաստիարակների վրայ՝ բայց հայոց դպրոցին պէտք է թողնել կատարեալ ազատութեան մէջ, թէ՛ ծրագրի եւ թէ՛ աւանդութեան եղանակի վերաբերեալ, հայ միտքն ու համակրութիւնը շահելու դիտաւորութեամբ։ Փիլ յետոյ Աղեքսանդր Բ.-ի ազատարար շունչը փչեց համայն Ռուսիայի վերայ։ Բարեյաջող կացութիւնից հնար էր օգտուել եւ օժտել հայ ազգը սեփական կանոնաւոր դպրոցներով եւ ապահովել հայ մշակոյթն ու հայութեան ինքնուրոյնութիւնը։ Բայց թերացանք այդ սրբազան պարտքի եւ պահանջի մէջ։ Պոլոժենիան հրահանգում է, որ

Հայ Եկեղեցու զաւակների կրթութեան համար Ս. Էջմիածնի ամէն մի թեմում հաստատուում է հոգեւոր դպրոց։ Վեց թեմից երկուսը երբեք չունեցան պահանջուած դպրոցը[48], իսկ միւս թեմերի դպրոցները մնացին խրղճուկ վիճակի մէջ, առանց մշակուած եւ հաստատուած ծրագրի, եւ անկարող՝ հաւասարուել պետական վարժարաններին։ Ս. Էջմիածնի Ճեմարանը հիմնուեց միայն 1874 թուին եւ եղաւ ազգային կրթութեան հնոց կէս դար շարունակ։ Բարեկարգ դպրոցները կազմում են այժմ էլ մեր գոյութեան խարիսխը։ Ի՞նչ կը լինէր ներկայ մեր մշակոյթի վիճակը, եթէ միջնակարգ հոգեւոր դպրոցները կանգնած լինէին կրթական պահանջների բարձրութեան վերայ։ Միական դպրոցներն աւելի եղկելի դրութեան մէջ էին։ Հնուց սովորութիւն էր, որ գիւղական եկեղեցիներում տեղական քահանան, թէ տիրացուն, ձմրան օրերին, գեղջուկ երեխաներին գրել եւ կարդալ էր սովորեցնում։ Պոլոժենիան ընդունել էր, որ, այդ սովորութեան համաձայն, ամէն մի եկեղեցի եւ վանք կարող է ունենալ դպրոց։ Սակայն ոչ ոք փոյթ չտարաւ երբեք գիւղական դպրոցների մասին մինչեւ Մատթէոս Ա., երբ հաստատուեցին հոգաբարձու մարմիններ եւ նրանց յանձնուեց գործը։ Գէորգ Դ. թեմական տեսուչներ նշանակեց՝ ընդհանուր հսկողութեան համար։ Բայց եւ այնպէս՝ դրութիւնը մնաց խառնակ՝ ծրագրի, ուսուցիչների պատրաստականութեան եւ նիւթական միջոցների նկատմամբ։ 1871-1872 թուականներին ռուսական վարժարանները նոր կազմակերպութիւն ստացան՝ բաժանուելով երկու կարգի՝ գիմնազ եւ ռէալ դպրոց։ Գուցէ մերձաւոր առիթն այս վերանորոգութեան եղաւ այն, որ ռուս կառավարութիւնը հրաման հանեց 1873 թուին, որ բոլոր կարգի եւ ազգի վարժարանները, հաշուած եւ հայ դպրոցները, բացի թեմական հոգեւոր դպրոցներից ենթակայ են լուսաւորութեան նախարարութեան տնօրինութեանը։ Գէորգ Դ. Կաթողիկոսն հարկաւոր բացատրութիւն տուեց կառավարութեան, որ դպրոցները եկեղեցական են եւ ոչ հասարակական եւ, ըստ Պոլոժենիայի, գտնուում են հայ հոգեւոր իշխանութեան տեսչութեան ներքոյ։ Կառավարութիւնը թողեց խնդիրը նախկին վիճակի մէջ, միայն պնդեց, որ հոգեւոր իշխանութիւնը պարտաւոր է տարեկան հաշուետուութիւն ներկայացնել։ Թւում է, որ ազգային իշխանութիւնը թերացաւ, անփոյթ գըտնուեց այս պարտաւորութեան հանդէպ, ուստի ռուս կառավարութիւնը քանիցս սաստելուց յետոյ՝ 1884 թուին սուր կերպարանք տուեց հարցին՝ պահանջելով անմիջապէս գործադրել նախարարութեան որոշումները հայ դպրոցների վերաբերեալ, եւ որովհետեւ Հայրապետական Աթոռը թափուր էր՝ Սինոդը իրեն իրաւասու չհամարեց միջամուխ լինել խնդրին մինչեւ նոր հայրապետի ընտրութիւնը։ Կառավարութիւնը, անտեղի փութկոտութեամբ եւ բռնի միջոցներով փակեց դպրոցները 1885 թուին։

Այս անօրինակ բրտութիւնն անսպասելի չէր։ Աղեքսանդր Բ. կայսրի

եղերական մահից յետոյ մի նոր եւ ազգայնամոլ հոսանք սկսուեց Աղեքսանդր Գ-ի օրով։ Հայերի հանդէպ [նրա] բռնած դիրքը բնաւ չէր համապատասխանում այն տրամադրութիւններին, որ ստեղծել էր Հայկական Հարցը՝ խրախուսելով քաղաքական շարժումը, փութացնել իրագործումն այն երազների, որ այնքան մօտալուտ էին թւում։ Սկզբից եւեթ ռուսաց կառավարութիւնը թշնամական վերաբերմունք որդեգրեց դէպի հայ քաղաքական խանդավառութիւնը, շարունակեց աննուազ եռանդով իր անիմաստ քաղաքականութիւնը մինչեւ մեծ պատերազմը[49]։ Ռուս մոլեռանդութեան առաջին զոհն եղաւ հայ դպրոցը։ Հոգաբարձական աղմկալից ընտրութիւնները, մանաւանդ գլխաւոր քաղաքներում, անվերջ գանգատները ուսուցիչներից, թէ հոգաբարձուներից, որոնց լայն արձագանգ էր տալիս անհեռատես մամուլը, այլ բանի չծառայեցին քան կենտրոնացնել կառավարական ուշադրութիւնը հայ դպրոցների վերայ եւս առաւել որ տեղական անբարեացակամ ռուս պաշտօնէութիւնը պատրաստ էր ամէն կարգի բանսարկութիւններ անել բարձր իշխանութեան հաճելի լինելու համար։ Ռուս կառավարութիւնը թիւր տեղեկութիւններ ունէր հայոց դրպրոցների թուի եւ տնտեսութեան մասին։ Ջափազանցրած կարծիք ունէր մանաւանդ դպրոցական միջոցների եւ նրանց աղբիւրի մասին։ Թերթերի աղմուկները տեղիք էին տուել կարծելու, որ միջոցները գլխաւորապէս ժողովրդական են եւ յոյս ունէր դպրոցները գրաւելուց յետոյ նախկին միջոցներով պահել նոյն դպրոցները՝ Կովկասի շրջանային հոգաբարձութեան հսկողութեան տակ։ Հիասթափումը մեծ էր, երբ Մայր Աթոռը բացատրեց, որ մեր դպրոցները ժողովրդական չեն եւ ոչ էլ սեփական գոյք ունեն, այլ միայն եկեղեցական են, որովհետեւ պահւում են եկեղեցու հասոյթներով։ Հետեւապէս, չար գործը առաջ տանելու համար մնում էր հարուածն ուղղել դէպի եկեղեցու սեփականութիւնը, պատրուակ բռնելով չարամիտ ամբաստանութիւնները, թէ եկեղեցու հարստութիւնը ծառայում է սնուցանելու արտասահմանեան յեղափոխական կազմակերպութիւնները։ Հեռու չգնանք։ Դառնանք Մելքիսեդեկ Եպիսկոպոսի մեղադրութեան։

Մակար Արքեպիսկոպոսն ընտրուեց, երբ դպրոցներն արդէն փակուած էին։ Մելքիսեդեկի կարծիքով «փակուած դպրոցները Մակարի ձեռքով չբացուեցան, զի նա տէրութեան արարածն էր» եւ «ծխական դպրոցներն իսկ պետական ծրագրի եւ հսկողութեան ենթարկուեցան»։ Այստեղ դիտաւորեալ չփոթ կայ մեղադրականի մէջ։ Փակուած դպրոցները հենց նոյն ծխական դպրոցներն էին, որ չնորհիւ Մակարի վերաբացուեցին։ Անտեղեակ ընթերցողը պիտի կարծէ, թէ այլ էին բռնի փակուած դպրոցներն, որ փակ մնացին եւ այլ՝ ծխական, որ նոր պատուհաս կրեցին՝ ենթարկուելով պետական հսկողութեան։ Օծուելուց յետոյ՝ Մակարի առաջին գործն եղաւ դպրոցների խնդիրը։ Խորհրդակցութեան հրաւիրեց ձեռնհաս դէմ-

քեր, ամէնէն կարող մասնագէտներ, ինչպէս Սեդրակ Մանդինեանը[50], նշանաւոր մանկավարժ, Կարապետ Կոստանեանը՝ մեծանուն հայագէտ[51], Արշակ Նահապետեանը՝ Ճեմարանի տեսուչ[52], յետագայում՝ եկեղեցական, Ստեփանոս Պալասանեանը՝ պատմագէտ[53], եւ սրանցից կազմեց մի յատուկ յանձնաժողով, որին եւ յանձնեց խնդրի խորունկ եւ բազմակողմ ուսումնասիրութիւնը՝ մի քանի վանականների աջակցութեամբ։ Յանձնաժողովը ստուգեց վիճակագրական տեղեկութիւնները ծխական դպրոցների թուի եւ նիւթական աղբիւրների մասին։ Երկու հարիւրից աւելի չէին այն դպրոցները, որոնք կարող էին փոքրիշատէ ապահով համարուել տնտեսապէս։ Սրանց համար եւս մշակուեց ընդհանուր ծրագիր։ Փակուած դպրոցները մեծ մասով նախակրթարաններ էին։ Քաղաքների մէջ միայն կային աւելի թուով դասարաններ։ Թիֆլիսում Գայանեան եւ Յովհաննեան Աղջկանց Դպրոցները բացառիկ երեւոյթ էին իրենց վեց դասարաններով։ Նոր դպրոցական ծրագիրը ընդունում էր հինգ տարուայ դասաւանդութիւն՝ Ա., Բ., եւ Գ. պատրաստական դասարաններ եւ Ա., Բ. դասարաններ։ Աւարտողները կարող էին շարունակել իրենց կրթութիւնը թեմական դպրոցներում։ Ուսուցիչների վարձատրութեան խնդիրը եւս կանոնաւոր եւ պարտաւորիչ ձեւ ստացաւ երկարգ կոպարների հաստատութեամբ։ Կառավարութեան շատ պահանջները չընդունուեցին պարտ ու պատշաճ բացատրութեամբ։

1886 թուին, դպրոցները մի քանի ամիս փակ մնալուց յետոյ, բացեցին իրենց դռները, առանց արտաքին որեւէ փոփոխութեան. նոյն հոգաբարձութիւնները, նոյն ուսուցիչները, նոյն սովորոյթները դպրոցական կեանքի։ Մելքիսեդեկը սխալւում է կարծելով, որ հայ ուսուցիչների ընտրութիւնը պիտի կատարուէր այնուհետեւ Կովկասի շրջանի հոգաբարձուի գիտութեամբ։ Ընտրութեան եղանակը մնում էր նախկինը, այսինքն՝ վերապահւում էր հոգաբարձութեան, հսկողութիւնը պատկանում էր հոգեւոր իշխանութեան։ Կովկասեան հոգաբարձուի պահանջն էր, որ ուսուցչական կազմի մէջ չսպրդեն անբաղձալի վարքի տէր անձեր, կամ օտարահպատակներ եւ զանազան փախստականներ կասկածելի անցեալով։ Մերժել հոգաբարձուի ցանկութիւնը՝ նշանակում է անտեղի կասկածներ յարուցանել ուսուցիչների վերաբերեալ։ Ուսուցիչները մեծ մասամբ մեր դպրոցականներից էին, թեմական դպրոցներից եւ Ճեմարանից։ Մանկավարժական գործին անձնուէր եւ անշահասէր անձեր էին, վեր՝ կասկածից, եւ եթէ իրենք քաշւում էին ռուսական աչքերից՝ միակ պատճառը հակառուսական տրամադրութիւնները չէին, այլ ռուսերէնի անբաւարար գիտութիւնը։ Արդեօ՞ք չընդմիջեց այնուհետեւ լուսաւորութիւնը մեր դպրոցական գործերի մէջ, կամ վերջիններս զգացի՞ն պետական հսկողութեան ծանրութիւնը։ Երբեք։ Հարցը տեսական կամ ձեւական սկզբունքից այն կողմ չան-

ցաւ։

Հայոց պատմութիւն եւ աշխարհագրութիւն աւանդում էին թեմական դպրոցներում ինչպէս Ճեմարանում՝ երրորդ դասարանից սկսուած։ Հետեւապէս ծխական դպրոցներում նրանք տեղ չունէին։ Ռուսաց պատմութիւն եւ աշխարհագրութիւն, ինչպէս եւ ընդհանուր պատմութիւն եւ աշխարհագրութիւն Ճեմարանում աւանդւում էին երկրորդ դասարանից։ Ծխականները երկրորդ կամ վերջին տարին պարտաւոր էին նոյն առարկաների վերաբերեալ տարրական տեղեկութիւններ տալ, նայելով ուսուցչի կարողութեան։ Ռուսաց լեզուով կրօնի դասեր աւանդել հայ աշակերտներին՝ կաթողիկոսի կողմից չընդունուեց։ Մելքիսեդեկի յոռի մարգարէութիւնը, թէ երբեւիցէ պիտի նոյն պահանջը գործադրուէր՝ երբեք չիրականացաւ։ Այս խնդիրը ծագել էր հայ ծնողների ամօթալի նախաձեռնութեամբ։ Կրօնը ռուս դպրոցներում առաջնակարգ առարկաների թւում էր, թէեւ շատ վատ էր աւանդւում։ Հայ տղաների վերաբերեալ հայ կրօնը նոյն բարձր դիրքն ունէր։ Կրօնագիտութեան թուանշանը համարւում էր յայտարար ե՛ւ տղայի բարոյականութեան ե՛ւ վարք ու բարքի։ Պարտաւորիչ էր, որ բոլորն էլ բարձր նիշ, այն է հինգ, ստանան, այլապէս չէին կարող փոխել դասարանը եւ հասունութեան վկայական ստանալ։ Մոսկուայում մի քանի անմիտ հայ ծնողներ, որոնց զաւակները հայերէն չգիտէին եւ ցանկութիւն չունէին գէթ տառերը իւրացնել եւ մի քանի աղօթքներ անգիր անել՝ դիմեցին դպրոցի վարչութեան՝ խնդրելով, որ իրենց զաւակները կրօնի դասերին հետեւէին ռուս լեզուով՝ բարձր նշան եւ լաւ վկայական ստանալու նպատակով։ Ահա՛ խնդրի ցաւոտ ծագումը։ Ի՞նչ կարելի էր սպասել հայ լեզուի ուսուցումից, երբ ցանկացողների թիւը շատ աւելի նուազ էր եւ դասարանը գրեթէ դատարկ։

Ծանր կացութիւնից Մակար Կաթողիկոսն ելաւ պատուով, կատարեց ինչ որ հնարաւոր էր՝ առանց ցնցումների, առանց նոր անախորժութեանց դուռ բանալու։ Իրեն վիճակուած դատը վարեց եկեղեցու պետին վայել մեղմութեամբ։ Խուսափեց բողոքաւոր աղաղակներից, բայց եւ չիջաւ լալկան աղերսողի նկուն նութեան։ Կանգնած իր դիրքի բարձրութեան վրայ՝ պաշտպանեց եկեղեցու իրաւունքները դպրոցական խնդրում եւ չուրացաւ նաեւ պետութեան պատկան հսկողութեան իրաւունքը, որպէսզի չզօրացնէ աւելի եւս այն անտեղի կասկածները, թէ հայ դպրոցները հակապետական քարոզի հնոցներ են։ Հայ դպրոցում գաղտնիք չկար, դռները բաց էին պետութեան առաջ։ Թող դային հսկիչները եւ փարատէին իրենց անվստահութիւնը։ Առանց յարձակողական ձեւեր առնելու՝ Հայոց Հայրապետը հանդարտօրէին քննութեան առաւ պաշտօնական առաջարկներն ու պահանջները եւ ներկայացրեց իր նկատողութիւններն որպէս սրբագրութիւններ, ուղղումներ՝ փաստելով իր առարկութիւնները այնպիսի կուռ ու տրամաբան

դատողութեամբ, որ հարկադրեց կառավարութեան գործը հնարաւոր յաջողութեամբ պսակելու չափ։

Մակար Կաթողիկոսը մեծ գիտութեան տէր չէր, բայց գիտէր մեծապէս գնահատել գիտութեան արժէքը։ Մ[այր] Աթոռի ժառանգաւորաց դըպրոցն իր սաների մէջ դաստիարակում էր անկեղծ սէր դէպի եկեղեցականի կոչումը եւ անշեղ հաւատարմութիւն եկեղեցու սրբազան աւանդներին։ Նոյն յատկութեամբ օժտուած էին նոյն դպրոցի գրեթէ բոլոր իր ժամանակակից եւ յետագայ սաները։ Կան գիտուն գլուխներ, որ պատասխանատու պաշտօնի կոչուելով, եւ վստահանալով միմիայն իրենց գիտութեան՝ ցանկացած գործնական արդիւնքը չեն տալիս։ Եւ ընդհակառակը, յաճախ գիտութեամբ պակասաւորները դիմելով աւելի կարող անձերի օգնութեան՝ բեղմնաւոր աշխատանք են կատարում։ Մակար Կաթողիկոսը, առաջին տարին եւեթ, չրջապատեց իրեն այն ժամանակուայ ամէնէն պատրաստուած եւ հրապարակի վրայ կանգուն մտաւոր բարձր ուժերով, նրանց հաւատաց Ճեմարանի ղեկը, եւ օգտուեց նրանց կարողութիւնից նաեւ հայրապետական գործերի մէջ։ Վերջինի նկատմամբ յիշելու է յատկապէս Պետրոս Սիմոնեանի[54] մատուցած ծառայութիւնը։ Սա խմբագիր էր Մեղու Հայաստանի օրաթերթի, անձնուէր բարեկամ Մակարի եւ նրա թեկնածութեան ջերմեռանդ պաշտպան։ Մակարի ընտրութիւնից յետոյ տեղափոխուեց Էջմիածին, ստանձնելու Արարատի խմբագրութիւնը։ Դատապարտողներ ունեցաւ այս անպայման սխալ քայլի համար։ Բայց ամէն պարագայում՝ պիտանի եղաւ եւ վստահելի նեցուկ՝ նորընտիր հայրապետին եւ, կարելի է ասել, գլխաւոր թելադրիչ նրա վարչական գծի։ Սիմոնեան փոքրահասակ եւ վտիտ մարմնով մի մարդ էր, բայց ծանրաբեռնուած երկար տարիների փորձառութեամբ եւ հայ կեանքի խորունկ գիտութեամբ՝ այս թէ այն կողմը սահմանի։ Հայկական Հարցի արեւածագին, երբ օդը թնդում էր խուլ եւ լուր աղաղակներով եւ [անհրաժեշտ էր] գծել գործունէութեան նոր եւ շառաչիւն ուղիներ ի սպաս նուիրական նպատակներին՝ Սիմոնեան գրեթէ միակն էր, որ մնաց անմասն ընդհանուր խանդավառութեան, չչնջալով՝ «հանդարտ կացէք, կը կոտորեն ժողովուրդը», ասաց ոչ յետնեալ մարգարէի շնչով, այլ նախիմաց հեռատեսութեան թռիչքով։ Այս մարդը, խոհեմութեան այս վարպետը, իր տեղն ունի մեր մտաւոր շարժումի պատմութեան մէջ, որի Մեղուն շատ հիւթեղ ծաղիկներ է տուել մեր նոր կեանքի, նոր լեզուի առաջադիմութեան եւ անարդարութիւն է ուրանալ երախտաւորի երախտիքը, եւ «յետադէմ ու խաւարամիտ» բառեր նետելով անցնել մօտէն։

Մակար կաթողիկոսի առաջ մի ուրիշ ծանր խնդիր կար։ Գէորգ Դ.ի մահից յետոյ Ճեմարանի տեսուչներ նշանակուեցին յաջորդաբար Աղափիրեան Եպիսկոպոսը[55], Մեսրոպ Սմբատեան Եպիսկոպոսը[56], Սարգիս Գաս-

պարեան Ապարանցին[57], Նիկողայոս Խոսրովեանը[58], մէկը միւսից ապիկար, անծանօթ դպրոցական գործին։ Մակար Կաթողիկոսը անօրինակ փայփայանք ունեցաւ Ճեմարանի հանդէպ։ Հրաւիրեց Արշակ Նահապետեանին տեսչի պաշտօնով։ [Վերջինս] Ս. Պետերբուրգի համալսարանից էր, բնագիտական–մաթեմատիկական բաժինը աւարտած։ Կ. Եզեանը[59] Նահապետեանին, Փիլ[իպոս] Վարդանեանին[60] եւ Ս. Մանդինեանին պատրաստել էր Սանասարեան դպրոցի համար։ Ինչ–ինչ պատճառով սրանք հրաժարուել էին գնալ Էրզրում։ Երեքն էլ հրաւիրուեցին Ճեմարան։ Ռուս կառավարութիւնը պահանջել էր ունենալ Ճեմարանի կանոնադրութիւնը։ Ասել կ'ուզէր, որ Ճեմարանի վիճակն անորոշ էր եւ պահանջուած ծրագիրը երբեք չէ ներկայացուել կառավարութեանը։ Ա. Նահապետեանն իր ընկերակիցների հետ միասին մշակեց ծրագիրը, կազմեց մի գրութիւն, ուր մի առ մի հերքւում էր բոլոր այն լուտանքները, որ մութ ուժերը կուտակել էին Ճեմարանի վերայ՝ սկսած Բարոն տը Նիկոլայից մինչեւ Կ.Պ. Եանոկսկին[61]։ Այս հին եւ կնճռոտ խնդիրն եւս իր լուծումն ստացաւ։

Ուսուցչական կազմը թարմացաւ Նահապետեանի օրով։ Հրաւիրուեցին նոր եւ թարմ ուժեր։ Ցիշենք՝ Յովհաննէս Յովհաննիսեանը՝ մեր անուանի բանաստեղծը[62], Եղիշէ Մաղաթեանը[63], որ տարաբախտաբար շուտով հիւանդացաւ անբուժելի ցաւով, Ստեփանոս Լիսիցեանը[64], Յովհ. Սաղաթելեանը[65], Խոջայեանը[66], Գասպարեանը[67], Նիկողայոս Քարամեանը[68], հներից՝ Մկրտիչ Պալեանը – Նախկին Մխիթարեան[69]։ Վերջապէս հրաւիրուեց Մաղաքիա Օրմանեանը[70], որ կարողացաւ Ճեմարանը դնել որպէս մի տեղահան սիւն իր իսկական պատուանդանի վրայ։ Տասներեք տարի էր անցել Ճեմարանի հիմնադրութեան օրէն եւ [այն] տակաւին ոչ մի սպասաւոր չէր տուել եկեղեցուն, այնինչ Ճեմարանի բուն նպատակներից մէկն էր եւ գլխաւորը՝ պատրաստել լուսաւոր եկեղեցականներ։ Օրմանեան Սրբազանը թէեւ մի տարի միայն դասախօսեց Ճեմարանում, բայց այդ էլ բաւական եղաւ, որ պանծացնէր եկեղեցական բեմը, որպէս անկաշկանդ գործունէութեան վեհ ասպարէզ, եւ ահա տարիների անպտուղ ծառը տուաւ առաջին եւ ատօք բերքը։ Ինքը՝ տեսուչ Ա. Նահապետեանն առաջին օրինակը տուաւ եւ հազաւ վանականի սեւ սքեմը։ Նրան հետեւեցին իր սիրելի աշակերտներից Կարապետ Տէր–Մկրտչեանը[71], Գարեգին Յովսէփեանը[72], Տիգրան Տէր Յովհաննիսեանը [Տիրայր Արքեպիսկոպոս][73], Գէորգ Զորեքչեանը[74], Սողոմոն Գէորգեանը (Կոմիտաս)[75], Լուսեղէն Զօհրապեանը (Յուսիկ Եպիսկ. Ռումանիոյ)[76], Ղեւոնդ Գյանջեցեանը[77] եւ Մուշեղ Տէր–Գաբրիէլեանը։ Վերջինս մեռաւ երիտասարդ հասակում, իսկ Գյանջեցեանն ակամայ թողեց սքեմը։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տես՝ Ն. Ադոնց, ***Հայկական Հարցի Լուծման Շուրջ***, Երեւան, 1989: Ն. Ադոնց, «Քրդական ներքափանցումը Հայաստան», տե՛ս ***Երեկոյեան Երեւան***, օրաթերթ, 20 Մարտ 1990: Պ.Յ.Յովհաննիսեան, «Նիկողայոս Ադոնցի քիչ յայտնի «Թուրքական նուռան եւ թուրքական Հայաստանը» յօդուածը, ***Լրաբեր*** ՀԳԱԱ (Հասարակական Գիտութիւններ), 1990, թիւ 4, էջ 72–77: Հ.Ա. Աւետիսեան եւ Պ.Յ. Յովհաննիսեան, «Ն. Ադոնցի «Հայկական Հարցը եւ գերմանական պլանները»» աշխատութիւնը, ***Լրաբեր*** ՀԳԱԱ (Հասարակական Գիտութիւններ), 1993, թիւ 1, էջ 137–148: Պ.Յ. Յովհաննիսեան, «Ն. Ադոնցի Հայաստանը եւ հայկական գաղթօճախները նորայայտ յօդուածը» ***Գարուն***, ամսագիր, 1994, թիւ 1, էջ 68–75:
2. Տես՝ N. Adontz, "Note sur les synaxaires arméniens", ***La Revue de l'Orient Chrétien*** (ROC), No. 4, Paris, 1924, p. 211-218. նաեւ՝ N. Adontz, "Les fêtes et les saints de l'Eglise Arménienne", նոյն տեղում, No. 26, Paris, 1927-1928, p. 74–104, 225–278. Տպագրութիւնը մնացել է անաւարտ, բում է, թէ խմբագրական ինչ-ինչ միջամտութիւնների պատճառով: Աշխատութեան շարունակութիւնը լոյս է տեսել միայն 1980–1981 թուերին՝ Շ. Ռենուի աշխատասիրութեամբ՝ (տես՝ Ch. Renoux, "Les fêtes et les saints de l'Eglise Arménienne de N. Adontz", ***Revue des Etudes Armeniennes*** (REArm), nouvelle série, t. XIV, Paris, 1980, p. 288-304, t. XV, Paris, 1981, p. 103-113):
3. Ն. Ադոնցի պէյրութեան թղթօնը յայտնաբերուել է միայն վերջերս: Դրա մասին ընդհանուր գաղափար կարելի է կազմել լոյս տեսած լրատուութեան միջոցով: Տես՝ ***Ազդակ***, օրաթերթ, Պէյրութ, 9 Մարտ 1993. ***Ազատամարտ***, շաբաթաթերթ, Երեւան, 9–15 Ապրիլ 1993 եւ ***Հայաստանի Հանրապետութիւն***, օրաթերթ, Երեւան, 7 Մայիս 1993:
4. Տես՝ Համազգայինի Պէյրութի գրական պահոց, Ն. Ադոնցի թղթօն, պահարան I, գզրոց Բ, թղթածրար 3:
5. Տես՝ ***Արարատ***, ամսագիր, Վաղարշապատ, 1902, թիւ 3–4, էջ 262–274:
6. Տես՝ ***Ռուսաստանի ժողովրդական կրթութեան մինիստրութեան ամսագիր***, 1911, Ապրիլ, էջ 238–249 (ռուսերէն), տես նաեւ նոյնի հայերէն թարգմանութիւնը՝ ***Հանդէս ամսօրեայ***, 1912, էջ 256–271:
7. Տես՝ ***Քրիստոնէական արեւելք***, ամսագիր, Ս. Պետերբուրգ, 1913, թիւ 2, էջ 175–186 (ռուսերէն):
8. N. Adontz, "Le questionnaire de S. Grégoire l'Illuminateur", տես՝ ***ROC***, 1925–1926, 3e serie, t.V (XXV), p. 309-377, նոյնը տե՛ս եւ առանձին՝ Paris, 1927, p. 50: Ն. Ադոնց, «Գրիգոր Պարթեւի հարցաքանը եւ Եզնիկ», ***Հայրենիք***, ամսագիր, Պոսթոն, 1928, թիւ 7, էջ 72–81: N. Adontz, "Grégoire l'Illuminateur et Anak Le Parthe", ***REArm***, 1928, t. VIII, p. 233-245 տե՛ս նաեւ նոյնի հայերէն թարգմանութիւնը՝ ***Հայրենիք***, ամսագիր, 1928, թիւ 9, էջ 73–80:
9. Տես՝ ***Բանբեր գրականութեան եւ արուեստի***, Գիրք Ա., Ս. Պետերբուրգ, 1903, էջ 214–223:
10. Տես՝ ***Մնահիպ***, ամսագիր, Փարիզ, 1936, թիւ 3, էջ 16–23: Տե՛ս նաեւ առանձին, Երուսաղէմ, 1938: Սոյն յօդուածը թարգմանուել է նաեւ ֆրանսերէն ու ռումիներէն:
11. Տես՝ «Փղոսկրեայ Աւետարանի արուեստը», ***Միտն***, 1936, թիւ 9, էջ 273–274: «Մլքէի Աւետարանի գրութեան տարին» տե՛ս նոյն տեղում, էջ 274–275:
12. Ն. Ադոնցին նուիրուած առաւել ընդարձակ ու միակ գիտական ակնարկը պատկանում է դոկտոր Կ. Եուզպաշեանին: (Տե՛ս ***Պատմա-բանասիրական Հանդէս***, 1962, թիւ 4, էջ 115–127):
13. Ն. Ադոնց, «Վերջաբան», ***Հայաստանի Պատմութիւն*** (թարգմանութիւն՝ ֆրանսերէ-

նից), Երեւան, 1972, էջ 394:

14. Մակար Ա. Տէր-Պետրոսեան Թեղուտցի (1813-1891) – Ամենայն Հայոց Կաթողիկոս (1885-1891): Նախապէս Վրաստանի (1864-1876), Նոր Նախիջեւանի եւ Պեսարաբիայի (1876-1885) հոգեւոր թեմերի առաջնորդ, կաթողիկոսական տեղապահ (1883-1885):
15. Աւելի ճիշդ է՝ Պոլոժենիէ (Polojenie): Սա Հայոց Եկեղեցու կանոնադրութիւնն էր, որով այն առաջնորդւում էր Ռուսաստանեան Կայսրութեան տարածքում:
16. Ընդգծումը կը պատկանի հեղինակին:
17. Ակնարկում է հանգուցեալ կաթողիկոս Մակար Ա.ին, որը վախճանուել էր 1891ի Ապրիլի 16ին:
18. Արիստակէս Եպիսկոպոս Սեղրակեան (1840-1906) – Վրաստանի, ապա Աստրախանի հոգեւոր թեմերի առաջնորդ: Մակար Ա.ի մահից յետոյ, Սինոդի պրոկուրոր Կանչելիի աջակցութեամբ փորձեց գրաւել կաթողիկոսական գահը:
19. Յարութիւն Եպիսկոպոս Վեհապետեան (1823-1910) – Կ. Պոլսի պատրիարքական փոխանորդ, Խարբերդի եւ Կարնոյ հոգեւոր թեմերի առաջնորդ, պատրիարք Կ. Պոլսի (1885-1888) եւ Երուսաղէմի (1881-1910):
20. Խորէն Եպիսկոպոս Աշրգեան (1842-1899) – Արմաշի Վանքի վանահայր, Կ. Պոլսի Հայոց Պատրիարք (1888-1894):
21. Մկրտիչ Ա. Խրիմեան Վանեցի (1820-1907) – Ամենայն Հայոց Կաթողիկոս (1892-1907): Նախապէս Վարագայ Վանքի վանահայր, Տարօնի եւ Վանի հոգեւոր թեմերի առաջնորդ, Կ. Պոլսի Հայոց Պատրիարք (1869-1873):
22. Մ.Ղ. Նալբանդեան (1829-1866) – գրող, հրապարակախօս, յեղափոխական-դեմոկրատ:
23. Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս Մուրադեանցի (Գարեգին Գրիգորի Մուրադեանց) կենսագրութեան այս եւ միւս մանրամասները տես՝ Հ. Փալագաշեան, ***Ակնարկ Մը Մելքիսեդեկ Մուրադեանց Արքեպիսկոպոսի Գործունէութեան Շուրջ***, Կ. Պոլիս, 1929:
24. Նկատի ունի 1903ի Յունիս 12ի՝ հայ եկեղեցական հողերը եւ գոյքը բռնագրաւելու մասին ցարական օրէնքը:
25. Վաղարշակ – Հայոց աւանդական թագաւոր, ենթադրւում է, որ իշխել է մ.թ.ա. 2րդ դարում: Ըստ Մովսէս Խորենացու՝ Վաղարշակը Հայաստանում անց է կացրել բազմաթիւ տնտեսական, ռազմական ու մշակութային բարենորոգումներ:
26. Տես՝ ***Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց***, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփխիս, 1913, էջ 30:
27. Յակոբ Սարգսի Շահան Ջրպետեան (1772-1837) – հայագէտ: Նապոլէոն Բոնապարտի աջակցութեամբ 1798 թուականին Փարիզի Արեւելեան Կենդանի Լեզուների Բարձրագոյն Դպրոցում հիմնադրել է հայոց լեզուի ամբիոն, եղել է այդ ամբիոնի առաջին վարիչը (1798-1826), դասաւանդել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում: Գործուն մասնակցութիւն է ունեցել ***Պոլոժենիէ***ի ստեղծմանը:
28. Սերովբէ Եպիսկոպոս Արարատեան, Կարնեցի (?-1847) – մատենագիր, եղել է Լազարեան Ճեմարանի տեսուչ (1815-1822), Աստրախանի հայոց հոգեւոր առաջնորդ: Որոշ մասնակցութիւն է ունեցել ***Պոլոժենիէ***ի ստեղծման աշխատանքներին:
29. Կանոնադրութեան նախագծի ստեղծմանը մասնակցել են նաեւ Հայկական Մարզի կառավարիչ իշխան Բարսեղ Բեհբութովը եւ ցարական աստիճանաւոր, կոլեգիական ասեսոր Օշկինը:
30. Ժամանակի պատրիարքն էր Ստեփանոս Աղաւնի Զաքարեանը (1831-1839):
31. Սինոդ (Յունարէն «հաւաքոյթ» բառից) – Ամենայն Հայոց Կաթողիկոսին կից հոգեւոր անձանց ժողով (1837-1917):

32. Մ.Ա. Լազարեան (1737–1809) – պետական գաղտնի խորհրդական: Անձամբ մշակել է Հայոց Եկեղեցու կառավարման բարեփոխման կանոնադրութիւնը, որի հիման վրայ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Դանիէլ Ա. Սուրմառեցին 1808 թուի Մայիսի 25ին ստեղծեց Էջմիածնի բարձր հոգեւորականութեան ներկայացուցիչներից կազմուած Բարձրագոյն Խորհրդարանը (Սիւնհոդոս):
33. «Դաւիթ–Դանիէլեան աղմուկները» – նկատի ունի 19րդ դարի սկզբներին Ամենայն Հայոց Կաթողիկոսական գահի համար Հայ Եկեղեցու ներսում ծաւալուած երկպառակտչական պայքարը, որի գլխաւոր դերակատարներն էին Դաւիթ Եպիսկոպոս Ղորդանեանը (ապագայ կաթողիկոս Դաւիթ Ե.՝ 1801–1807) եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Դանիէլ Սուրմառեցին (ապագայ կաթողիկոս Դանիէլ Ա.՝ 1801–1808):
34. Եփրեմ Ա. Տէր Յովհաննիսեան Չորագեղցի (1748–1835) – Ամենայն Հայոց Կաթողիկոս (1809–1820): Նախապէս Ռուսաստանի հոգեւոր թեմի առաջնորդ (1801–1809):
35. Ներսէս Ե. Շահազիզեան Աշտարակեցի (1770–1857) – Ամենայն Հայոց Կաթողիկոս (1843–1857): Նախապէս Վրաստանի (1814–1828), Պեսարապիայի եւ Նոր Նախիջեւանի (1828–1843) հոգեւոր թեմերի առաջնորդ:
36. Մատթէոս Ա. Չուխաճեան Կոստանդնուպոլսեցի (1802–1865) – Ամենայն Հայոց Կաթողիկոս (1858–1865): Նախապէս Պուրսայի եւ Զմիւռնիայի հոգեւոր թեմերի առաջնորդ, Կ. Պոլսի պատրիարք (1844–1848):
37. Այդ ժամանակ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքն էր Յակոբոս Եպիսկոպոս Սերոբեանը (1848–1856):
38. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան (1845–1910) – յետագայում Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Բ. Կոստանդնուպոլսեցի (1908–1910):
39. Գէորգ Եպիսկոպոս Քերեստեճեան (1813–1882) — յետագայում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Դ. Կոստանդնուպոլսեցի (1866–1882):
40. Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան (1837–1884) – Կ. Պոլսի Հայոց Պատրիարք (1874–1884): 1884 թուի Ապրիլի 2ին Թրքահայոց Ընդհանուր եւ Մայիսի 9ին Էջմիածնի Համազգային Ընտրական Ժողովներում ընտրուել է կաթողիկոսութեան առաջին թեկնածու: Սակայն առողջութեան վատթարացման պատճառով հրաժարուել է կաթողիկոսական գահից:
41. Էջմիածնի Համազգային Ընտրական Ժողովում (1885 թուի Ապրիլի 21) քուէները բաշխուել են հետեւեալ կերպ – Մելքիսեդեկ Եպիսկոպոս՝ 30, Մակար Եպիսկոպոս՝ 16, Մկրտիչ Եպիսկոպոս Խրիմեան՝ 13 եւ Խորէն եպիսկոպոս Աշրգեան՝ 3:
42. Մ.Ս. Վորոնցով (1782–1856) – գեներալ – ֆելդմարշալ, Պետական Խորհրդի անդամ, Կովկասի փոխարքայ (1844–1854):
43. Ա.Ի. Բարիատինսկի (1815–1879) – գեներալ – ֆելդմարշալ, Պետական Խորհրդի անդամ, Կովկասի փոխարքայ (1856–1862):
44. Նկատի ունի Պետական Խորհրդի նախագահ իշխան Ա.Ֆ. Օրլովին, որը միաժամանակ նաեւ մինիստրների դահլիճի նախագահն էր (1856–1861):
45. Ակնարկում է Մատթէոս Ա. Կաթողիկոսի ***Խորհրդածութիւն Շնորհաց եւ Նշանաց եւ Խորհրդոց Քրիստոնէական Սուրբ Եկեղեցւոյ Զմիւռնիա***, 1842, ***Հանդիսարան Ուղղափառութեան Հայոց Եկեղեցւոյ***, Կ. Պոլիս, 1854, ***Բարի Մարդ եւ Բարի Քրիստոնեայ***, Կ. Պոլիս, 1856, նաեւ՝ Թիֆլիս, 1860, ***Հերքումն Զրախնդիր Վայրաբանութեանց Ոմանց Մերազնեայ Տկարամիտ Անչանց***, Մոսկուա, 1861, ***Հաստատութիւն Սկզբունքեան Դաշանց Թղթոյն***, Փարիզ, 1862, եւ այլ գործերին:
46. Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազովսկի (1812–1880) – եկեղեցական գործիչ, մանկավարժ, խմբագիր, պատմաբան: Դասաւանդել է Վենետիկի Ռաֆայէլեան, Փարիզի Մուրատեան եւ Հայկազեան, Թէոդոսիայի Խալիպեան վարժարաններում, Գէորգեան

Ճեմարանի տեսուչ (1875–1878), Նոր Նախիջեւանի, Պեսարապիայի եւ Վրաստանի թեմական առաջնորդ:

47. Թիւրիմացութիւն է՝ պէտք է լինի Թէոդոսիա, որտեղ 1858–1871 թուականներին գործել է Գ. Այվազովսկու հիմնադրած Խալիպեան Արական Վարժարանը:

48. Սկզբնապէս թեմական դպրոցներ էին գործում վեց թեմերից հինգում, դրանք էին՝ Աբարատեան (Երեւան, 1837), Վրաստանի (Թիֆլիս, 1837), Ղարաբաղի (Շուշի, 1838), Աստրախանի (1838) եւ Շամախու (1844) թեմերը: Սակայն վերջին երկուսը զարգացում չապրեցին եւ վերածուեցին սովորական տարրական դպրոցների:

49. «Մինչեւ մեծ պատերազմը» – նկատի ունի Առաջին Համաշխարհային Պատերազմը (1914–1918 թ.թ.):

50. Ս.Ա. Մանդինեան (1844–1915) – Նշանաւոր մանկավարժ, հոգեբան, հասարակական գործիչ: Հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրութիւնների, դպրոցական դասագրքերի ու ձեռնարկների: 1880–1900 թուականներին (որոշ ընդհատումներով) մանկավարժութիւն եւ հոգեբանութիւն է դասաւանդել Գէորգեան Ճեմարանում:

51. Կ. Կոստանեան (1853–1920) – ականաւոր հայագէտ, Գէորգեան Ճեմարանի ուսուցիչ (1878–1891), ապա՝ տեսուչ (1894–1899, 1902–1905) խմբագրել է ***Արարատ*** հանդէսը:

52. Ա. Նահապետեան (Նահապետ Եպիսկոպոս Նահապետեան՝ 1848–1906), մանկավարժ, եկեղեցական գործիչ: Ներսիսեան դպրոցի, ապա Գէորգեան Ճեմարանի տեսուչ (1881–1884, 1886–1891):

53. Ս.Հ. Պալասանեան (1837–1889) – Նշանաւոր պատմաբան, մանկավարժ: Դասաւանդել է Թիֆլիսի Ներսիսեան եւ ռէալական դպրոցներում, Գէորգեան Ճեմարանում, Գայանեան Օրիորդաց Դպրոցի հիմնադիրներից է:

54. Պ. Սիմոնեանց (1830–1911) – գրական-հասարակական գործիչ, հրապարակախօս: Եղել է ***Մեղու Հայաստանի*** շաբաթաթերթի խմբագիր (1863–1866), եւ ***Արարատ*** ամսագրի խմբագրի պաշտօնակատար:

55. Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանց (1827–1898) – եկեղեցական գործիչ, մանկավարժ: Խրիմի Ս. Խաչ Վանքի վանահայր, Ալեքսանդրապոլի եւ Պեսարապիայի թեմական առաջնորդի փոխանորդ: Դասաւանդել է Խալիպեան Վարժարանում, եղել է Շուշուայ եւ Երեւանի թեմական դպրոցների, ինչպէս նաեւ Գէորգեան Ճեմարանի տեսուչ (1884–1885):

56. Մեսրոպ Եպիսկոպոս Սմբատեանց (1833–1911) – եկեղեցական գործիչ, բանասէր, պատմաբան: Տաթեւի եւ Երնջակի Վանքերի վանահայր, Արարատեան թեմի առաջնորդական փոխանորդ, Սինոդի անդամ, Գէորգեան Ճեմարանի տեսուչ (1886–1887): Պատմագիտական ակնառու աշխատութիւնների համար ընտրուել է Ռուսաստանի Կայսերական Հնագիտական Ընկերութեան անդամ (1892):

57. Սարգիս Եպիսկոպոս Գասպարեան Ապարանցի (? - 1898) – եկեղեցական գործիչ, մանկավարժ: Գէորգեան Ճեմարանի տեսուչ (1891–1892, 1893–1894), Սինոդի անդամ:

58. Նիկողայոս Խոսրովեան – մանկավարժ, լրագրող: Հրատարակել է ***Վարժարան*** մանկավարժական ամսագիրը (1882–1884), Թիֆլիսի Գայանեան Դպրոցի եւ Գէորգեան Ճեմարանի տեսուչ (1885–1886):

59. Կ.Հ. Եզեան (1835–1905) – ականաւոր հայագէտ, ազգային-եկեղեցական գործիչ, ռուսական պետական խորհրդական: Նրա ջանքերով 1881 թուականին Կարին քաղաքում հիմնադրուել է Սանասարեան Վարժարանը:

60. Փ.Հ. Վարդանեան (1842–1916) – գրական գործիչ, մանկավարժ, բարգմանիչ: Գէորգեան Ճեմարանի ուսուցիչ: Աշխատակցել է ***Արարատ, Արեւելեան մամուլ, Փորձ, Ար-***

Յաղանգ, *Վարժարան*, *Աղբիւր* եւ այլ հանդէսներին:

61. Բարոն Ա.Պ. տը Նիկոլային եւ Կ.Պ. Եանովսկին եղել են Կովկասեան գլխաւոր վարչութեան խորհրդականներ, Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուներ. վերջինս անմիջականօրէն գլխաւորել է հայկական դպրոցները փակելու աշխատանքները:
62. Յ.Մ. Յովհաննիսեան (1864–1929) – ականաւոր բանաստեղծ, թարգմանիչ, մանկավարժ: Գէորգեան Ճեմարանում դասաւանդել է ռուս գրականութիւն եւ լեզու, յունարէն, ընդհանուր գրականութիւն եւ այլն:
63. Ե. Մաղաքեան (1865–1918) – մանկավարժ, պատմաբան–բանասէր, լրագրող, թարգմանիչ: Պաշտօնավարել է Գէորգեան Ճեմարանում (1888–1894), Շուշուայ թեմական դպրոցի տեսուչ:
64. Ստ. Դ. Լիսիցեան (1865–1947) – ականաւոր ազգագրագէտ, բանասէր, մանկավարժ, թարգմանիչ: Դասաւանդել է Գէորգեան Ճեմարանում (1889–1894):
65. Յ. Սաղաքելեան – պատմաբան, հասարակական գործիչ, մանկավարժ, Գէորգեան Ճեմարանի տեսուչի օգնական (1891–1893): Եղել է երկրորդ եւ երրորդ պետական դումաների պատգամաւոր:
66. Լ. Խոջայեան – մանկավարժ, դասաւանդել է Գէորգեան Ճեմարանում (1889–1891), Երեւանի թեմական եւ այլ դպրոցներում:
67. Բ. Գասպարեան – մանկավարժ, Գէորգեան Ճեմարանի երկարամեայ ուսուցիչ (1889–1907):
68. Ն. Քարամեան – պատմաբան, բանասէր, մանկավարժ, *Արարատ* հանդէսի խմբագիր (1894–1896): Հեղինակն է ***Պարթեւները Պարսկաստանում եւ Նրանց Յարաբերութիւնները Հայոց Հետ*** (Ս. Էջմիածին, 1896) մենագրութեան: Երկար տարիներ Գէորգեան Ճեմարանում դասաւանդել է ընդհանուր պատմութիւն:
69. Մ. Պալեան (1834–1907) – հայագէտ, մանկավարժ, գրող: Դասաւանդել է Խալիպեան, Ներսիսեան եւ Երեւանի թեմական դպրոցներում, Գէորգեան Ճեմարանում: Աշխատակցել է *Արարատ* ամսագրին:
70. Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան (1841–1918) – ազգային–եկեղեցական գործիչ, մանկավարժ, պատմաբան: Արմաշի Վանքի վանահայր, Բարձր Հայքի հոգեւոր առաջնորդ, Կ. Պոլսի պատրիարք (1896–1908): Հռոմի Անտոնեան Վարժարանի եւ Արմաշի Դպրեվանքի տեսուչ, եղել է Գէորգեան Ճեմարանի քարոզիչ եւ աստուածաբանական գիտութիւնների ուսուցիչ (1887–1888): Հեղինակն է *Ազգապատում* կոթողային երկասիրութեան (հատ. 1–3, Կ. Պոլիս–Երուսաղէմ, 1912, 1913, 1927):
71. Կարապետ Տէր–Մկրտչեան (1866–1915) – եկեղեցական գործիչ, պատմաբան, մանկավարժ: Ատրպատականի եւ Շամախու թեմերի հոգեւոր առաջնորդ, Գէորգեան Ճեմարանի տեսուչ, *Արարատ* ամսագրի խմբագիր (1902–1906), խմբագրել է *Առաւօտ* եւ *Թավրիզեան նորութիւններ* թերթերը:
72. Գարեգին Յովսէփեան (1867–1952) – ականաւոր հայագէտ, մանկավարժ, մշակութային, եկեղեցական գործիչ, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Գարեգին Ա. (1943–1952): Խրիմի եւ Նախիջեւանի, Հիւսիսային Ամերիկայի հայոց թեմերի առաջնորդ: Եղել է Գէորգեան Ճեմարանի տեսուչ (1905–1906, 1915–1917), *Արարատ* ամսագրի խմբագիր (1907–1908, 1918–1919):
73. Տիգրան Տէր–Յովհաննիսեան (Տիրայր Արքեպիսկոպոս՝ 1867–1956) – եկեղեցական գործիչ, մանկավարժ, հայագէտ, Մայր Աթոռի դիւանապետ: Պեսարապիայի թեմի առաջնորդական փոխանորդ, Հիւսիսային Ամերիկայի հայոց հոգեւոր առաջնորդ: Դասաւանդել է Երեւանի եւ Ղարաբաղի թեմական դպրոցներում, Գէորգեան Ճեմարանում:

74. Գէորգ Չորեքչեան (1868–1954) – եկեղեցական – ազգային գործիչ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Զ. (1945–1954): Նոր Նախիջեւանի առաջնորդական փոխանորդ, Վրաստանի թեմի առաջնորդ, կաթողիկոսական տեղապահ:
75. Սողոմոն Գէորգեան (Սողոմոն Գէորգի Սողոմոնեան, Կոմիտաս Վարդապետ, 1869–1935) – հանճարեղ երգահան, երաժշտագէտ, եկեղեցական գործիչ, մանկավարժ: Երկար տարիներ Գէորգեան Ճեմարանում դասաւանդել է երաժշտութիւն, եղել է Մայր Տաճարի խմբավար, Ճեմարանում հիմնադրել է երգչախումբ:
76. Լուսեղէն Զօհրապեան (Յուսիկ Արքեպիսկոպոս՝ 1871–1942) – եկեղեցական գործիչ, պատմաբան: Գէորգեան եւ Լազարեան Ճեմարանների ուսուցիչ: Սինոդի անդամ, Մայր Աթոռի դիւանապետ, յետագայում Ռումինիայի հայոց հոգեւոր առաջնորդ:
77. Ղեւոնդ Գյանջեցեան (Եզնիկ Վարդապետ) – եկեղեցական գործիչ, հայագէտ, խմբագիր: Յ. Մանադեանի եւ Ֆ. Ֆինկի հետ Մարբուրգում հրատարակել ու աշխատասիրել է հայերէն–գերմաներէն ***Հանդէս հայագիտութեան*** հանդէսը (1901–1903):

Պ.Բ.

NIKOGHAYOS ADONTZ
AS THE HISTORIAN OF THE ARMENIAN CHURCH
(Summary)

BEDROS HOVHANNISIAN

The renouned Armenian Byzantologist, Nikoghayos Adontz, is the author of more than a dozen of books and studies all dealing with the history of Armenia and Armenians. All through his life (1871-1942) he taught in various western universities, and worked and published on a wide range of Armenian life and history past and present. Yet few of his readers realized how deeply he was involved in church history and what a formidable Armenian Church historian he was.

In spite of the fact that he published quite a large number of works, he left behind a considerable amount of unpublished manuscripts, which are now deposited in the archives of the Hamazgayin Cultural Association, Beirut, Lebanon. Even a scanty reading of this material will prove the existence of works which will open to light the various facts of the Armenian Church history, which, it seems, fell into the scope of the great historian's interests. Of these works mention must be made of the ***Tonatsouyts*** (Calendar of Religious Feasts, in Armenian, two different copies of 500 and 600 pages each), Tjashots (Lectionary, in Armenian, 150 pages), ***Grigor Anavarzetsou Tonatsouytse*** (The Calendar of Religious Feasts of Grigor of Anavarza, in Armenian, 50 pages), ***Patkeri Khendire Hayots Yekeghetsou Mech*** (The Question of Iconography in the Armenian Church, in Armenian, 65 pages), ***Asora-Parskakan Kristoneakan Yekeghetsou Astitjanakargoutoune*** (The Religious echeloning system in the Assyro-Persian Christian Church, in Russian, 20 pages), ***Kristonyaneri Halatzanknere Sasanian Parskastanoum V-VI Dareroum*** (The Persecution of the Christians in Sassanid Persia in the V-VI Centuries, in Russian, 30 pages), ***Mee Ech Katoghikosoutian Merdzavor Antsyalits*** (A Page of the Recent Past of the Armenian Catholicosate, in Armenian, 17 pages), and some 150 pages of studies all pertaining to the Armenian ***Tjashots***. Besides this unpublished material, Adontz has published quite a large number of studies in Armenian, French and Russian and all dealing with the History of the Armenian Church.

Of all the unpublished material "A page of the recent past of the Armenian Catholicosate" must be pinpointed not only as the most complete study among the various manuscripts, but rather because it sheds new light on one of the crucial problems the Armenian church ever faced. The ***Polojenye*** imposed by the Tsarist authorities on the Armenian Church and nation in 1836 was never accepted and appreciated willingly. It was rather considered a tool at the hands of the imperial authorities easily to rule the newly occupied and annexed Eastern Armenia and subdue to servility the Armenian people and their church. Since then the ***Polojenye*** has remained an unsolved question for all those who have tackled with it within the scope of the history of Eastern Armenia.

As many others, Nikoghayos Adontz too has probed the problem of the ***Polojenye*** and has reached to the conclusion that it not only clearly defined the rights and duties of the Armenian Church but also regulated the functioning of the church organs, the election of the Catholicos, the Supreme Head of the Armenian Church, it created a synod to help the Catholicos carry on his duties, organized a hierarchical system in the administration of the church itself, made room for the creation of educational centralized system and brought forth various councils all dependent on the ministry of education of the Russian Empire; according to Adontz, the new ***statute***, instead of curtailing and curbing the traditions and rights of the Armenian Church and its head, rather filled the gaps in the organizational system. But, as he put it "This reforming of the Armenian Church did, indeed, give rise to complaints and grievances".

By publishing the manuscript of Adontz and by making use of an abundant annotation added to the article, Hovhannisian helps the reader to have a new approach and better understand the ***Polojenye,*** giving to it new dimensions and light, and, moreover, thus rescuing from definite oblivion one of the important studies of the Armenian historian, the "Mee Ech Katoghikosoutian Merdzavor Antsyalits".